19-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԸ

ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ
աստվածաբան
ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր
հանձնակատարի գրասենյակ
anul.asatryan.93@gmail.com

ՀՏԴ՝ 37; 165.9
DOI: 10.54503/1829-4278.2026.1-217

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է 19-րդ դարավերջին հայ հոգևոր դասի կրթության վերաբերյալ հայ հասարակության շրջանում, ժամանակի հայ պարբերական մամուլում տեղ գտած քննարկումներին և այդ առնչությամբ Հայ եկեղեցու առաջին աստվածաբան-միաբան Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի մոտեցումների վերհանմանը: Հոդվածում Կ. եպս. Տեր-Մկրտչյանի աշխատանքների և անձնական արխիվում պահվող նյութերի ուսումնասիրության միջոցով ներկայացվում են քննարկվող հարցին վերջինիս մոտեցումները՝ աստվածաբան-գիտնականի դիտանկյունից: Իսկ ժամանակի հայ պարբերական մամուլի երկու խոշոր ներկայացուցիչների՝ «Մշակ»-ի և «Հայրենիք»-ի քննարկվող ժամանակաշրջանի համարների ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են վերջիններիս դիրքորոշումները Հայ եկեղեցականության կրթության և ժամանակի հայ հոգևոր կրթական ուսումնական հաստատությունների վերաբերյալ: Պարբերականների ընտրությունը պայմանավորված է քննարկվող ժամանակաշրջանում հասարակական կարծիքի ձևավորման ուղղությամբ վերջիններիս ունեցած մեծ դերակատարությամբ:

Բանալի բառեր. Կարապետ եպս. Տեր-Մկրտչյան, աստվածաբան, հոգևորականների կրթություն, Քահանայական հարց, կրոնավոր, կղերական, քարոզ, «Արարատ» ամսագիր, «Մշակ», «Հայրենիք», Արմաշի դպրեվանք

Մուտք

Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը՝19-րդ դարավերջի Հայ եկեղեցու հոգևորականներից առաջին աստվածաբան-միաբանը, որը աստվածաբանական բարձրագույն մասնագիտական կրթություն է ստացել եվրոպական համալսարաններում, իր գործունեության ողջ ընթացքում մշտապես կարևորել է հոգևորականների և ընդհանրապես հայ հասարակության շրջանում կրթվածության մակարդակի բարելավումը, հատկապես իր վարչական գործունեության[1] ընթացքում փորձել է բոլոր հնարավոր ճանապարհներով նպաստել հայ հոգևորականների և երիտասարդության կրթությանը[2]:

Այսպես՝ իր ուսումնասիրություններում, անձնական նամակներում Կ. եպս. Տեր-Մկրտչյանն առաջնային պլան է բերել հայ հոգևորականների կրթության հարցը, իսկ իր գործունեության ընթացքում մշտապես օժանդակել հոգևորականների բարձրագույն աստվածաբանական կրթություն ստանալուն:

Հոգևորականների կրթությանը վերաբերող հոդվածների տպագրումն «Արարատ» ամսագրում, ինչպես նաև թեմայի արծարծումը վերոհիշյալ ժամանակաշրջանում ինքնանպատակ չէր: Նմանօրինակ անդրադարձը թեմային պայմանավորված էր 19-րդ դարավերջին հայկական մամուլում քննարկվող «Քահանայական հարց»-ով: Եվրո-

[1] Կ. Տեր-Մկրտչյանը 1903 թ. նշանակվել է Երևանի թեմական առաջնորդի փոխանորդ, 1906 թ. նոյեմբերի 15-ին նշանակվել է Ալեքսանդրապոլի վիճակի փոխանորդ, 1907-1912 թթ. զբաղեցրել է Ատրպատականի թեմի առաջնորդի պաշտոնը, իսկ 1914-1915 թթ.՝ Շամախու թեմի առաջնորդությունը:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 312, ց. 1, գ. 99, թ. 1: Տե՛ս նաև նույն տեղում, թ. 33: Տե՛ս նաև նույն տեղում, ֆ. 56, ց. 15, գ. 359ա, թ. 22: Տե՛ս նաև Մատենադարան, Կարապետ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 100, վավ. 18, 49, 100, 104, 105, 124, 186: Տե՛ս նաև նույն տեղում, Գարեգին Հովսեփյանի անձնական արխիվ, թղթ. 95, վավ. 477, թ. 1ա: Տե՛ս նաև Նամակ Պարսկաստանից, *Մշակ*, 1907, h. 170, ուրբաթ, նոյեմբերի 30, էջ 2: Տե՛ս նաև Նամակ Պարսկաստանից, *Մշակ*, 1908, h. 56, չորեքշաբթի, մարտի 12, էջ 3: Տե՛ս նաև Կենտրոնական դպրոց Ատրպատականում, *Մշակ*, 1908, h. 82, ուրբաթ, ապրիլի 18, էջ 4: Տե՛ս նաև Նամակներ Պարսկաստանից, *Մշակ*, 1908, h. 87, հինգշաբթի, ապրիլի 24, էջ 4: Տե՛ս նաև Թեմական դպրանոց Թաւրիզում, *Մշակ*, 1909, h. 18, երեքշաբթի, յունվարի 27, էջ 4: Տե՛ս նաև Թեմական դպրանոց Թաւրիզում, *Մշակ*, 1909, h. 19, չորեքշաբթի, յունվարի 28, էջ 4: Տե՛ս նաև Նամակ Պարսկաստանից, *Մշակ*, 1909, h. 52, չորեքշաբթի, մարտի 10, էջ 4: Տե՛ս նաև Կրթական գործը Սալմաստում, *Մշակ*, 1910, h. 185, երեքշաբթի, օգոստոսի 24, էջ 4: Տե՛ս նաև Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի գործունեության չուսումնասիրված էջերը, «Արցախ մշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողով, Երևան և Վայոց Ձոր, 15-18, հուլիս 2022 թ., Die unerforschten Seiten aus der Tätigkeit des Bishofs Karapet Ter-Mkrtchzan/ Կարապետ եպս. Տեր- Մկրտչյանի գործունեության չուսումնասիրված էջերը, «Das kulturelle Erbe von Arzach, Üniversitätsverlag Kiel, Deutschland, 2024 https://macau.uni-kiel.de/receive/macau_mods_00004097 (մուտք՝ 10.02.2026):

պական համալսարաններում կրթություն ստացած հայ աստվածաբանների Մայր Աթոռ վերադարձով մամուլում մեծ թափով սկսեց քննարկվել վերջիններիս աշխատանքի արդյունավետությունը, հոգևոր դասի անհրաժեշտությունն ու լինելիության պահանջն առհասարակ: Հարցերի այս համախումբը ժամանակի հայտնի եզրաբանությամբ առավել հայտնի է «Քահանայական հարց» անվամբ: Պատմական նոր դարաշրջանի շեմին ազգային պետության բացակայության պայմաններում միասնական կրթական համակարգ չունեցող հայ հասարակության աշխարհիկ մասի շրջանում կրթված ներկայացուցիչների քանակական աճը, հասարակության կենսամակարդակի աստիճանական բարձրացումը, կաթոլիկ և բողոքական միսիոներների կազմակերպված գործունեությունն ու ակնհայտ ազդեցությունը հայաբնակ գավառներում, ինչու ոչ նաև հիմնականում ձախական հայացքներ ունեցող հայ քաղաքական կուսակցությունների ակտիվ գործունեությունը, հայ մամուլի ներկայացուցիչների և այս շարքում առավելապես կուսակցական մամուլի ընդգծված վերաբերմունքը Հայ եկեղեցու և հոգևոր դասի դեմ հանգեցնելու էին մի իրավիճակի, երբ հասարակությունը առաջ էր քաշելու ազգային, հասարակական կյանքում առանձնահատուկ դերակատարում ունեցող Հայ եկեղեցու և հոգևոր դասի ավելի բարձր կրթական ցենզի ակնկալիքի անհրաժեշտության, վերջիններիս դերակատարության, գործառույթների, իսկ ավելի ուշ՝ անգամ Հայ եկեղեցու կառավարմանը հասարակության մասնակցության հարցերը[3]: Ուստի քննարկվող ժամանակաշրջանում՝ բացի հասարակական արձագանքից, խնդրի քննարկմանն իրենց տեսակետներով նաև Հայ եկեղեցու հոգևոր դասի ներկայացուցիչների մասնակցությունը դառնում է անխուսափելի:

Կ. եպս. Տեր-Մկրտչյանի մոտեցումները Հոգևոր ասպարեզի և Հայ եկեղեցում քարոզի կիրառման վերաբերյալ

Տարբեր տարիների զբաղեցնելով «Արարատ» ամսագրի գլխավոր խմբագրի, կրոնական բաժնի խմբագրի, Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսչի, ճեմարանի կրոնական և աստվածաբանական առարկաների ուսուցչի պաշտոնը՝ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը «Արարատ» ամսագրում, որոշ դեպքերում կոնկրետ թիրախային հոդվածների տեսքով, բարձրացրել է հայ հասարակության շրջանում կրթության պահանջը և մշտապես կարևորել կրթության դերը: «Արարատ»-ի կրոնական բաժնի խմբագիր նշանակվելուց 2 ամիս անց՝ 1895թ. փետրվարի համարում

[3] *Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան*, Գիրք Է, Խրիմեան Հայրիկը և ցարական բռնապետութիւնը (1903-1907 թթ.), Երևան, 2000, էջ 465-481, 488-493, 586-588:

տպագրված «Քարոզի նշանակութիւնը և գործադրութեան եղանակը» հոդվածում Կ. եպս. Տեր- Մկրտչյանը, խոսելով եկեղեցում քարոզի դերի և հասարակության շրջանում դրա ունեցած նշանակության և կարևորության մասին, շեշտադրում է, որ եկեղեցու բեմից հոգևորականի ասած ամեն խոսք չէ, որ պետք է քարոզ համարել: Ըստ նրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր հասարակությունը մեծ պահանջ ունի եկեղեցում քարոզ լսելու, անհրաժեշտ է այդ փաստը ճիշտ օգտագործել՝ հոգևորականի միջոցով եկեղեցու խոսքը հավատացյալին հասցնելու համար[4]: Սակայն այստեղ առավելապես կարևոր էր նրա համար, որ շեշտադրվի ոչ թե քարոզի քանակը ավելացնելը, այլ հոգևորականների կողմից քարոզի բովանդակությանը ուշադրություն դարձնելը: Ըստ հեղինակի՝ քարոզիչն ու ունկնդիրը պետք է պարզ կերպով հասկանան, թե ինչ է քարոզը և ինչ կերպով պետք է այն ներկայացվի: Քանի որ վերջինից էլ կախված է քարոզի օգտակարությունը[5]: Կ. եպս. Տեր- Մկրտչյանը վերոհիշյալ հոդվածում գրում է, որ եկեղեցու ճըշմարիտ հոգևորականը, տիրապետելով սեփական եկեղեցու տեսակետին, առանձնահատկություններին և, որ գլխավորն է, Աստծո խոսքին, պետք է առաջնորդի հավատացյալին՝ այս դեպքում քարոզի ունկնդրին, այդ ճշմարիտ ճանապարհով: Նա սա հայ հոգևորականի պարտքն էր համարում[6]: Խոսելով քարոզի կառուցվածքի մասին՝ վերջինս նշում է, որ քարոզիչ հոգևորականը չպետք է մոռանա քարոզի կառուցվածքի մասին, քանի որ դրա ճիշտ կառուցվածքից է նաև կախված քարոզի ընկալման աստիճանը ունկնդիրների շրջանում: Քարոզն ընտրելու և պատրաստելու համար շատ կարևոր էր հաշվի առնել արտաքին պայմանները նս. իրականությունից չկտրվելը Տեր-Մկրտչյանը համարում էր քարոզի պատրաստման կարևորագույն պայմաններից մեկը: Վերոհիշյալ հոդվածում նա անդրադարձ է կատարում նաև քարոզի տեսակներին, դրա ճիշտ (տեղին) ընտրությանը, քանի որ նույն քարոզը բոլոր պայմաններում և ժամանակներում չէ, որ կարող էր նույնատիպ ազդեցություն ունենալ: Հետևաբար անհրաժեշտ էր ընտրել քարոզի տիպը և տեսակը ըստ տվյալ հանրույթի (եկեղեցու հավատացյալի)[7]: Իսկ սա ենթադրում էր որոշակի պայմաններ՝ առաջադրված քարոզիչ հոգևորականին: Ակնհայտ է, որ հոդվածում մենք տեսնում ենք հոգևորականների կրթության անհրաժեշտության, կարևորության, դրա արծարծման շեշտադրումը և քարոզիչ եկեղեցականի համար

[4] **Ասատրյան Ա.**, Կարապետ Տեր-Մկրտչյանը որպես Հայ Եկեղեցու բարենորոգիչ, *Հայոց պատմության հարցեր*, 2018, 19, էջ 54-55:

[5] **Կարապետ Աբեղայ**, Քարոզի նշանակութիւնը և գործադրութեան եղանակը, *Արարատ*, 1895, փետրուար, էջ 44:

[6] Նույն տեղում:

[7] Նույն տեղում, էջ 45-48:

հոգևոր, մասնագիտական կրթության անհրաժեշտությունը՝ որպես եկեղեցու համար իր հավատացյալների շրջանում կիրառվող շատ անհրաժեշտ «գործիք», քարոզի ճշգրիտ կիրառման նախապայման: Հետևաբար, ճիշտ և տեղին քարոզ՝ ունկնդրի ականջին հաճո կառուցվածքով և բովանդակությամբ կարող էր ընտրել միայն կրթված, իր գործում արժանավոր հոգևորականը, որը իր ունակությունները օգտագործելով՝ կկարողանար ճիշտ ընտրված քարոզի միջոցով ունկնդրին փոխանցել եկեղեցու խոսքը:

«Արարատ»-ի նույն թվականի մարտի համարում «Առաջնորդող»-ի փոխարեն տպագրված «Հոգևորական ասպարէզը» հոդվածում[8], Տեր-Մկրտչյանը գրում է, որ «Հոգևորականութեան խնդիրը ամենակարևոր և կենդանի խնդիրներից մէկն է մեզ համար և կմնայ դեռ երկար ժամանակ. իրականութեան մէջ նա երբէք լուծումն չի գտնի, մինչև որ մենք տեսականապէս չորոշենք այն զաղափարը, այն կատարելատիպը, որին հասնել պէտք է ձգտէ արժանաւոր հոգևորականը. իսկ եթէ զաղափարը կայ, որոշ, ամենքի աչքի առաջ նկարուած՝ նա իւր համար ճանապարհ կբանայ, մարդիկ կգտնէ: Այդ զաղափարը մութն է դեռ և ամենատարօրինակ կարծիքների առարկայ՝ գլխաւորապէս այն պատճառով, որ մենք նորան որոշելու համար չափը դրսից ենք բերում, փոխանակ նոյն իսկ հոգևոր կոչման մէջ որոնելու»[9]: Կ. եպս. Տեր-Մկրտչյանն այս հոդվածում նշում է հայ իրականության մեջ հոգևոր ասպարեզին և հոգևորականին տրվող հիմնական պահանջները[10], որոնց առկայությունը «կանաչ լույս» էր համարվում ասպարեզ մուտք գործելու և ընդհանրապես գործունեություն ծավալելու համար: Վերջինս որպես հասարակության շրջանում լայնորեն տարածված պահանջ է ներկայացնում հոգևորականի «ուսում ստացած լինելը»՝ որակելով այն որպես թվացյալ ամենասովորական, բայց միաժամանակ շատ վտանգավոր և տարատեսակ թյուրըմբռնումների տեղիք տվող պահանջ[11]: Բացառելով հոգևորականի «ուսում չստանալու հանգամանքը»՝ նա միաժամանակ ուշադրություն է հրավիրում այն փաստին, որ նմանատիպ մտայնությունը բերում է այնպիսի արատավոր, ծայրահեղ տեսակետի, որ հոգևորական դառնալու և հոգևոր ասպարեզում գործելու համար բավարար է միայն «ուսում ստացած լինելը»: Ստացվում է, որ հասարակության շրջանում դառնում է տիրապետող այն կարծիքը, որ հոգևորական կարելի է դառնալ առանց անգամ տարրական կարծիք ունենալու այդ գործի նրբությունների, առանձնահատկությունների և հոգևորական կոչմանը հարիր պարտականությունների մասին: Ինչպես նշում է

[8] **Կարապետ Վարդապետ**, Հոգեւորական ասպարէզը, *Արարատ*, 1895, մարտ, էջ 77–78:
[9] Նույն տեղում, էջ 77:
[10] **Ասատրյան Ա.**, Կարապետ Տեր-Մկրտչյանը..., էջ 55–56:
[11] **Կարապետ Վարդապետ**, Հոգեւորական ասպարէզը..., էջ 78:

Կ. եպս. Տեր-Մկրտչյանը, «Ամեն ուսում իրեն յատուկ աշխարահայեցողութիւնն ունի, իսկ մեծագոյն մասն այն դպրոցների, ուր մեր երիտասարդները կրթութիւն են ստանում՝ այնպիսի աշխարահայեցողութիւն է տալիս, որ հոգևորականութեան գաղափարին դժուար համակերպել կարող է»[12]: Իհարկե, վերջինս նշում է, որ քննարկվող ժամանակաշրջանում քրիստոնեական եկեղեցին ամբողջ աշխարհում լուրջ մարտահրավերների առաջ է կանգնած և եկեղեցականների շարքում էլ քիչ չեն եկեղեցու և հոգևորականի կոչմանը հակառակ գործողները, սակայն դա թույլ չի տալիս ասպարեզում տեղ տալ հոգևորի նշույլ անգամ չունեցող հոգևորականին և արդյունքում սպասել կամ պահանջել նրանից վեհ գործեր: Որպեսզի Հայ Եկեղեցին ունենա իր կոչմանն արժանի հոգևոր դաս, իսկ հասարակությունը տեսնի իր գործում գիտակ հոգևորականների, պետք է ընդունել, որ վերջիններս պիտի անցնեն համապատասխան մասնագիտական նախապատրաստություն՝ տվյալ դեպքում մասնագիտական հոգևոր կրթություն և իրենք իրենց մարդկային որակներով և արժեհամակարգով արժանի լինեն հոգևոր կոչմանը: Հետևաբար եկեղեցու ճշմարիտ հոգևորականը պետք է առաքելական աղբյուրներից վերցնի իր առաջնորդող գաղափարը և ոչ թե տուրք տա զանազան քմահաճ տեսությունների: Այսպիսով՝ Կ եպս. Տեր-Մկրտչյանն առաջին անգամ հրապարակային խոսում է հոգևորականների մասնագիտական կրթության անհրաժեշտության մասին՝ անդրադառնալով նաև հասարակության մեջ իր գործի գիտակ հոգևորականի անվիճելի դերին:

Ժամանակի պարբերական հայ մամուլի դիրքորոշումն Արմաշի դպրեվանքի վերաբերյալ

Քննարկվող ժամանակաշրջանում Հայ եկեղեցում դեռևս սակավաթիվ էին Եվրոպական տարբեր համալսարաններում ուսանած և ուսանող հայ հոգևորականները և, տրամաբանական է, դեռ վաղ էր խոսելը եկեղեցում նրանց ունեցած «բացասական» դերի[13] մասին: Չնայած դրան՝ հայ մամուլում այս միտքը մշտապես արծարծվել է և կարելի է ասել ձևավորել հոգևորականների կրթության վերաբերյալ բավականին կանխակալ վերաբերմունք: Ենթադրաբար, հենց այս հանգամանքով էլ պայմանավորված էր Կ. եպս. Տեր-Մկրտչյանի՝ հոգևոր դասի կրթության անհրաժեշտությունն արդարացնող և պաշտպանող բնույթի հոդվածների տպագրումը: Մյուս կողմից էլ ժամանակի պարբերական

[12] Նույն տեղում:

[13] **Սահակյան Ն.**, Եկեղեցու կարգն ու ժողովրդի բարքը. Կարապետ Տեր-Մկրտչյան և Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան), Երևան, 2021, էջ 13:

մամուլը գրեթե միաբերան «մերժում էր» կուսակրոն հոգևորականության գոյության անհրաժեշտությունը, հետևաբար և հոգևոր կրթական կենտրոնների այդօրինակ ուղղվածության պահպանումը[14]: Կ. Պոլսում հրատարկվող «Հայրենիք» թերթը Արմաշի դպրանոցի վերաբերյալ արտահայտում է հետևյալ միտքը. «... Դպրեվանքին հաստատութեան նկատմամբ մեր ունեցած սկզբնական չկամութիւնը կայ և կը մնայ միշտ: Դպրեվանքը կուսակրօն եկեղեցականներ պատրաստելու նուիրուած հաստատութիւն մըն է, և կուսակրօնութեան մասին Հայրենիքի սկզբունքները յայտնի են: Ու թող չկարծուի որ այդ սկզբունքները մերն են միայն. կուսակրօնութեան դէմ հոսանք մը սկսած է արդէն կազմուիլ ամէն խաւերու մէջ: Այն բազմաթիւ «կոչեցեալ»ներուն մէջէն որոնք Դպրեվանքը կը մտնեն, տեսանք թէ «ընտրեալ»ները ո՛րչափ քիչ են»[15]: «Հայրենիք»-ը, որպես հասարակության լայն շերտերի «խոսնակ», եկեղեցականների հոգևոր, մասնագիտական կրթություն ստանալը համարում էր Հայ եկեղեցում կղերականության տարածման միջոց, իսկ դա էլ իր հերթին, ըստ պարբերականի, բերելու էր հասարակության մեջ առանձին շերտի ձևավորման, որն իր գոյությամբ խոչընդոտ էր համարվելու եկեղեցի-հասարակություն սերտ և օրգանական կապի պահպանմանը: Ավելին՝ «Հայրենիք»-ը հստակ ձևակերպում է իր տեսլականը Արմաշի դպրեվանքի հետագա գոյության և հետապնդած նպատակի վերաբերյալ. «Արդ, համարձակաձայն պէտք է ըսել, Արմաշի Դպրեւանքին մէջ աշակերտները եկեղեցական պաշտօնին անհրաժեշտ ու հարկաւոր գիտութիւնը պիտի ունենան, առանց կրօնական անձուկ ոգին, առանց ամէն մասնագէտի յատուկ այն առանձնական հանգամանքին, որ ամէն երևոյթ իր սորված կերպովը կուզէ մեկնել եւ ուղղել: ...Գիտութիւնը՝ իրենց ձեռքին մէջ զէնք մը պիտի ըլլայ ոչ թէ իրենց յանձնուած հօտին վրայ տիրապետելու, այլ այդ հօտին հետ մէկտեղ, անոր հետ քով քովի, յառաջ տանելու ընդհանուր զարգացման գործը»[16]: Այնուամենայնիվ, Կ.Պոլսի պարբերականները զուգահեռ խոսում էին դպրանոցում աշակերտների ստացած ուսման բարձր որակի և ուսուցիչների բարձր պատրաստվածության ու իրենց աշխատանքին ցուցաբերած հոգատարության մասին[17]: Իսկ որպես եզրա-

[14] Սրդողածները, *Հայրենիք*, 1895, թիւ 1210, 5 յուլիս, չորեքշաբթի, էջ 1: Տե՛ս նաև Անփոփոխը, *Հայրենիք*, թիւ 1214, 9 յուլիս, կիրակի, էջ 1: Տե՛ս նաև Պարը, *Հայրենիք*, թիւ 1218, 13 յուլիս, հինգշաբթի, էջ 1: Տե՛ս նաև Աստուածաբան սերունդը, *Հայրենիք*, թիւ 1188, 13 յունիս, երեքշաբթի, էջ 1: Տե՛ս նաև Քանքարաթաքոյցները, *Հայրենիք*, թիւ 1189, 14 յունիս, չորեքշաբթի, էջ 1: Տե՛ս նաև Արմաշի դպրեվանքը, *Հայրենիք*, թիւ 1197, 22 յունիս, հինգշաբթի, էջ 1: Տե՛ս նաև Կրօնական միաբանութիւն մը, *Հայրենիք*, թիւ 1279, 12 սեպտեմբեր, երեքշաբթի, էջ 1:

[15] Դպրևանքը, *Հայրենիք*, 1895, թիւ 1207, 2 յուլիս, կիրակի, էջ 1:

[16] Դպրևանքը, *Հայրենիք*, 1892, թիւ 262, 5 հոկտեմբեր, երկուշաբթի, էջ 1:

[17] **Կարապետ Վարդապետ**, Արմաշու դպրեվանքը, *Արարատ*, 1895, օգոստոս, էջ 311:

կացություն՝ գրում է, որ «կղերանոց» հաստատության հետ պետք է շատ զգույշ վարվել, ուշադիր լինել, որ աշակերտները եկեղեցու գիտությունը սովորելով այն գործիք չդարձնեն իրենց ձեռքին՝ ուրիշների վրա տիրապետելու համար և այդ կրթության միջոցով չառանձնացեն իրենց որպես մեկ այլ դասակարգ[18]: Դպրեվանքի վեցամյա գործունեության վերաբերյալ գրված տեղեկագրում «Հայրենիք»-ը անդրադառնում է դպրեվանքի նախորդ տարիների գործունեության արդյունավետությանը, գրանցած նվաճումներին և արդյունքում հանգում այն եզրակացության, որ այն գումարը, որը ծախսվել է դպրեվանքում նախորդող տարիներին մի քանի կուսակրոն հոգևորական պատրաստելու համար, կբավականացներ մի քանի տասնյակ ուսուցիչ պատրաստելու և դրանով իսկ հասարակության լայն շերտերի համար ավելի հանրօգուտ աշխատանք կատարելու համար[19]: Միաժամանակ պետք է շեշտադրել, որ հոգևորականների կրթության անհրաժեշտության մասին «Հայրենիք»-ը խոսել է և, ի թիվս այլ մասնագիտությունների գծով երիտասարդների՝ եվրոպական համալսարաններում կրթություն ստանալուն, կարևորում է նաև այն հոգևորականների կրթության ապահովման հարցը, որոնք, գիտակցելով իրենց ոլորտում կրթվելու, մասնագիտական ավելի բարձր աստիճանի հասնելու և դրանով հասարակության պահանջներին համապատասխան քայլելու կարևորությունը, ձգտում են Եվրոպայում մասնագիտական կրթություն ստանալուն: Այս և նմանատիպ մի քանի դեպքերը «Հայրենիք»-ը բնորոշում է որպես նախադեպային, հետագայում ավելի շատ ուսյալ և «պիտանի» հոգևորականներ ունենալու գործում[20]: 1895թ. հուլիսի 25-ի 1230-րդ համարում[21] կարդում ենք, որ նախատեսվում է 1895թ. նոր ուսումնական տարում արդեն թույլատրել Արմաշի դպրանոցում սովորել նաև այն աշակերտներին, որոնք ցանկություն չունեն կուսակրոն հոգևորական դառնալու, մինչդեռ նախկինում դպրանոցում ուսանում էին բացառապես կուսակրոն հոգևորական դառնալու ցանկություն հայտնած անձինք: Պարբերականը սա համարում է կարևոր առաջընթաց, քանի որ դպրեվանքի ուսանողների քանակը կավելանար, ինչպես նաև ուսանած շատ աշակերտներ, չցանկանալով դառնալ կուսակրոն հոգևորական, աշխարհիկ քահանա չդառնալու պարագայում էլ կլինեն ուսուցիչներ, որը ևս գնահատելի արդյունք էր դիտարկվում[22]: Հոդվածից տեղեկանում ենք նաև, որ 1895թ.-ին նախորդող տարիներին Դպրեվանքը առաջին

[18] Դպրևանքը, *Հայրենիք*, 1895, թիւ 1207, 2 յուլիս, կիրակի, էջ 1:
[19] Վեցամեայ տեղեկագիր, *Հայրենիք*, 1895, թիւ 1163, 8 մայիս, երկուշաբթի, էջ 1:
[20] Ուշ չէ, *Հայրենիք*, 1895, թիւ 1226, 21 յուլիս, ուրբաթ, էջ 1:
[21] Արմաշի դպրեվանքը, *Հայրենիք*, 1895, թիւ 1230, 25 յուլիս, երեքշաբթի, էջ 1:
[22] Նույն տեղում:

դասարանի ուսանողներ չի ունեցել[23], իսկ այդ փոփոխությունից հետո արդեն կլինեին ուսանողներ: Ընդհանրապես տարբեր հոդվածներում անդրադարձ կատարելով Հայ եկեղեցու կրթական կենտրոնների գործունեությանը՝ «Հայրենիքը» վեր է հանում նաև կրթական կենտրոններում ուսանողների հետ տեղի ունեցած դեպքերը, ուսյալ և Հայ եկեղեցու ոգուն հավատարիմ շատ երիտասարդների ճնշվելը կղերամիտներից[24] և եզրակացնում, որ կղերամիտ աստվածաբանների գործունեության շնորհիվ ճեմարանը տակնուվրա է արվում և չի գնում այն նախանշած ուղով, որը սահմանված էր ի սկզբանե: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ քննարկվող ժամանակաշրջանում հայ հոգևոր կրթական կենտրոնները չէին բավարարում հայ հասարակության ունեցած սպասելիքները: Հայ հասարակության դիտարկմամբ՝ Հայ եկեղեցին, որպես հայ կրթական, գիտական կենտրոն, չէր կարողանում ամբողջությամբ ապահովել դաշտում հանրության սպասելիքները: Այսինքն՝ նոր հարյուրամյակի շեմին թմբիրից արթնացող հայ հասարակության շրջանում առկա էր Հայ եկեղեցու դերի իմաստավորման խնդիր, որին անդրադառնում էր հայ մամուլը առհասարակ՝ իր առանձին, հանրային կարծիք ձևավորող անհատներով, որոնցից մեկը Կ. եպս. Տեր-Մկրտչյանն էր:

Կ. եպս. Տեր-Մկրտչյանի տեսակետը Հայ եկեղեցում աստվածաբանների գոյության և մասնագիտական կրթության անհրաժեշտության վերաբերյալ

Կ. եպս. Տեր-Մկրտչյանը, փորձելով հարցի խորքային քննարկմանն ու առավել պարզաբանմանը մոտենալ այլ տեսանկյունից, «Աստուածաբաններ պէ՞տք են» հոդվածում հիշատակում է հասարակության մեջ տարածված տարբեր կարծիքներ հոգևորականության ընկալման, նրանց դերի, ընդհանրապես գոյության կարևորության մասին: Նա անդրադառնում է հոգևորականության վերաբերյալ հասարակության շրջանում մեծ տարածում գտած սուբյեկտիվ տեսակետներին և փորձում է վերլուծության ենթարկել դրանք: Քանի որ հասարակության շրջանում հոգևորականների և ընդհանրապես եկեղեցու վերաբերյալ ժամանակ առ ժամանակ տեղ գտած պոռթկումները, որոշ դեպքերում անտրամաբանական տեսակետների շուրջ ձևավորված մեծ աղմուկի արմատը Կ. եպս. Տեր-Մկրտչյանը տեսնում էր այս կարծիքների գեներացման շուրջ[25]: Խոսելով Հայ եկեղեցու լրջագույն խնդիր-

[23] Նույն տեղում:

[24] Վարդապետի մը մահը, *Հայրենիք*, 1895, թիւ 1108, 11 մարտ, շաբաթ, էջ 1:

[25] **Կարապետ Վարդապետ**, Աստուածաբաններ պէ՞տք են, *Արարատ*, 1898, մայիս, էջ 199– 200:

ներից կուսակրոն հոգևորականների և ընդհանրապես աստվածաբանական կրթություն ստացած հոգևորականների սակավաթիվ լինելու մասին՝ որպես աստվածաբան, գիտնական վեր է հանում օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ՝ բնավ չհերքելով եկեղեցու թերացումն այս հարցում: Քննարկելով եվրոպական զարգացած երկրներում տեղ գտած գիտության զարգացումն ու իբր դրա լույսի ներքո աստվածաբանության կամ եկեղեցականության դերի ու կարևորության նվազումը՝ Կ. եպս. Տեր- Մկրտչյանը պնդում է, որ տարածված բոլոր կարծիքները, կաթոլիկ կամ բողոքական եվրոպական շրջանակներից բերված օրինակները եկեղեցականների անհրաժեշտության մասին, միևնույն է, ապացույց լինել չեն կարող, որ եկեղեցականությունը որևէ էական դեր չի կատարում և ընդհանրապես ապագայում լուսավորյալ, զարթոնք ապրած ազգերի կամ հասարակությունների մեջ որևէ էական և նշանակալից դեր կատարել անկարող է[26]: Ընդհակառակը, հեղինակը գրում է, որ ինչպես առաջադեմ և կրթության կենտրոն Գերմանիայում, այնպես էլ առաջավոր եվրոպական այլ երկրներում, հասարակական կյանքի վերաբերյալ կարևոր խնդիրներն առաջ տանող, բարձրաձայնող և այդ խնդիրների լուծման ուղղությամբ եռանդուն պայքար տանող խավը հենց հոգևորականներն են: Նա նկատում է, որ հայ հասարակությունը ևս պետք է ըմբռնի, որ լավ և գործի գիտակ հոգևորական դառնում են միայն աստվածաբանություն ուսանելով[27], ինչպես բժիշկ դառնալու համար պետք է բժշկություն ուսանել: Այսինքն՝ եթե ցանկանում ենք Հայ Եկեղեցում տեսնել արժանավոր և գործի գիտակ հոգևորականներ, որոնք կկարողանան օգտակար լինել նաև հայ հասարակական շահերին, ապա անհրաժեշտ է ընդունել, որ հոգևորականը ևս պետք է «մասնագիտական կրթություն» ստանա: Վերոհիշյալով Կ. եպս. Տեր- Մկրտչյանը թեկուզ այս հարցի «ստվերում», բայց ևս մեկ անգամ խոսում է հայ հասարակության շրջանում ընդհանրապես կրթվածության մակարդակի բարձրացման վերաբերյալ: Տրամաբանական է, որ կրթվածության բարձր մակարդակ ունեցող հասարակությունը տուրք չէր տա մամուլում որոշ դեպքերում եկեղեցու դեմ ինչ-ինչ ուժերի կողմից ուղղորդված արշավներին և հարցը կքննարկեր իրականության այլ հարթության մեջ:

Հոդվածի շրջանակներում Կ. եպս. Տեր-Մկրտչյանն անդրադառնում է նաև աստվածաբանության որպես գիտության զարգացմանն ու մյուս գիտությունների շարքում նրանց համեմատ իր տեղը չգիջելուն[28]: Խոսելով քննարկվող ժամանակահատվածում շատ արդիական բնագիտական գիտությունների գրանցած առաջընթացի և դրա կողքին հու-

[26] Նույն տեղում, էջ 200:
[27] Նույն տեղում, էջ 201-202:
[28] Նույն տեղում:

մանիտար գիտությունների, այդ թվում աստվածաբանության՝ որպես գիտության գրանցած «հետընթացի» մասին՝ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը կարևորում է հասարակության շրջանում գիտությունների վերաբերյալ ընկալման փոփոխության հարցը[29]: Չլինելով բնագիտական ուղղության գիտություն՝ տրամաբանական է, որ աստվածաբանության մեջ գրանցված հաջողություններն ու առաջընթացը պակաս նկատելի են հասարակության լայն շերտերի, որը, իհարկե, չի կարելի ասել այլ գիտությունների վերաբերյալ, որոնց գրանցած առաջադիմությունն ու հաջողությունները շոշափելի են և շատ դեպքերում կիրառելի հասարակության շրջանում: Եվ վերջապես, խոսելով աստվածաբանության՝ որպես գիտության գոյության և կարևորության մասին՝ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը գրում է. «... աստվածաբանութիւն ուսանել արդի մտօք նշանակում է՝ պատմական հետազօտութիւնների վերայ հաստատուած մի քրիստոնէական աշխարահայեցողութիւն կազմել, որով պէտք է առաջնորդուի իւրաքանչիւր ոք ով կամենում է քրիստոնեաներ դաստիարակել, իրենց Աստուծոյ եւ իրենց ընկերի հետ ուղիղ յարաբերութիւն ունենալու համար: ...Իշխողն այստեղ ո՛չ թէ վերացական տեսութիւնն է, այլ պատմական հետազօտութիւնը, եւ պատմական հետազօտութիւնների ամբողջ շարք զանազան ճիւղերի բաժանուած եւ որոշ սկզբունքների ներքոյ դրուած՝ կազմում է աստուածաբանի ուսումնասիրութեան առարկան, որ հարկաւ երբէք աչքից չպէտք է փախցնէ այդ բոլորի գործնական նպատակը՝ հոգեւորական կոչման ծառայելը»[30]: Հոդվածում մանրամասն ներկայացնելով աստվածաբանություն գիտության ճյուղերը, դրանցից յուրաքանչյուրի գործառույթները, նպատակը՝ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը կարմիր թելի նման անց է կացնում և փորձում ապացուցել հոգևորականի աստվածաբանական կրթություն ստանալու անհրաժեշտությունը, կարևորությունը, դրա հսկայական դերը ինչպես հոգևորականի իրական և ճշմարիտ կերպարի ձևավորման, այնպես էլ ճշմարիտ հոգևորականի գոյությամբ իրական և իր նպատակին միտված եկեղեցու գոյության մասին: Կ. եպս. Տեր-Մկրտչյանը առաջնային պլան էր մղում եկեղեցու ողջ պատմության, գոյության ընթացքի ուսումնասիրությունը, քանի որ վստահ էր՝ եկեղեցու անցյալը, անցած պատմությունն ու ընթացքն առհասարակ ուսումնասիրելն ու իմանալը կօգնի հասկանալ ներկան և առաջ շարժվել ճիշտ ուղով[31]: Հեղինակը, հանգամանորեն բացատրելով աստվածաբանություն գիտության, հայ հոգևորականի այդ գիտությունը ուսումնասիրելու անհրաժեշտությունն ու կարևորությունը, փորձում է հոդվածի միջոցով ևս մեկ անգամ տալ ճիշտ մեկնաբանություն և հակակշռել մամուլում և հասարակության

[29] Նույն տեղում, էջ 201:
[30] Նույն տեղում:
[31] Նույն տեղում:

շրջանում լայնորեն տարածված այն թեզին, թե «... իբր ս. Էջմիածինը լեցուել է աստուածաբաններով, իբր այդտեղ աստուածաբաններ պատրաստելու մասին են միայն հոգ տանում եվ դորանով շատ անտեղի ու ապօրինի բան են անում»[32]: Նա փորձում էր հերքել նաև այն տեսլականը, թե Հայ եկեղեցին հեռու էր հասարակության իրական խնդիրներից, իսկ եկեղեցու ներսում միաբան աստվածաբանները նպաստում էին այդ իրավիճակի խորացմանը: Խոսելով հասարակության շրջանում տեղ գտած և տարածման մեծ միտում ունեցող այս խնդրի մասին՝ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը փորձում է նաև հասկանալ և մեկնաբանել այդ բողոքի կամ հակադրության հիմքը, այսինքն այն հիմնական պատճառը, որից ելնելով, մամուլում և հասարակության մեջ տեղ են գտնում նմանատիպ թյուր կարծիքներ: Նա հոգևորականների ճշմարիտ կրթություն ստանալու լավագույն արդյունք է համարում նաև այն, որ հայոց թեմական դպրոցներում ուսուցչապետեր, կրոնի դասագրքի հեղինակներ կլինեն հենց մասնագետները և ոչ հարակից գիտությունների ներկայացուցիչներ[33]:

Ի հավելումն նշենք, որ Կ. եպս. Տեր-Մկրտչյանն իր համաթեմա հոդվածներում[34] մշտապես կարևորում է հոգևորականների կրթության դերը կրթված, զարգացած և առաջեմ հասարակության ձևավորման տեսակետից: Նա հոգևորականներին համարում է այդ լույսի կրողները և այն հիմնական ուժը, որի միջոցով հասարակությունը պետք է կարողանա թոթափել խավարամիտ ժամանակներն ու մտածելակերպը: Հոգևորականների կրթության կարևորության տեսանկյունից նա մատնանշում է այն ցավալի իրականությունը, որ թեմական դպրոցներում կիրառվում են այնպիսի կրոնական դասագրքեր, որոնց հեղինակները, չունենալով համապատասխան կրթություն, պարզապես թարգմանում են օտարալեզու դասագրքերը, հրամցնում աշակերտներին՝ չխորանալով հատկապես կրոնի պարագայում եկեղեցիների միջև առկա դավանաբանական առանձնահատկություններին, որոնք էլ կազմում են եկեղեցիների բաժանման, տարբերությունների հիմքը[35]: Այս տեսան-

[32] Նույն տեղում, էջ 202:

[33] Նույն տեղում:

[34] **Կարապետ Աբեղայ**, Քարոզի նշանակութիւնը և գործադրութեան եղանակը, *Արարատ*, 1895, փետրուար, էջ 44–48: Տե՛ս նաև **Կարապետ Վարդապետ**, Հոգեւորական ասպարէզը, *Արարատ*, 1895, մարտ, էջ 77–78: Տե՛ս նաև Նույնի, Հայ հոգևորականութեան մէջ կղերական ոգի որոնողները, *Արարատ*, 1895, յուլիս, էջ 250–254: Տե՛ս նաև Նույնի, Արմաշու դպրեվանքը, *Արարատ*, 1895, օգոստոս, էջ 310–311: Տե՛ս նաև Նույնի, Աստուածաբաններ պէ՞տք են, *Արարատ*, 1898, մայիս, էջ 199– 204: Տե՛ս նաև Կրօնավորներ պէ՞տք են, *Արարատ*, 1898, յունիս, էջ 254–258: Տե՛ս նաև Նույնի, Նամակ խմբագրութեան, *Մշակ*, 1898, հ. 134, հինգշաբթի, յուլիսի 30, էջ 3: Տե՛ս նաև Նույնի, Կրկին քահանայական հարցը և աստուածաբանութիւնը, *Արարատ*, 1898, օգոստոս, էջ 344–349: Տե՛ս Կրթուած քահանաները և ժողովուրդը, *Արարատ*, 1899, փետրուար, էջ 64–67:

[35] **Կարապետ Վարդապետ**, Աստուածաբաններ պէ՞տք են..., էջ 202–203:

կյունից հեղինակը՝ որպես ուսումնասիրող գիտնական, շեշտադրում է «կրօնական վէճ»-ի տարբերակումը «կրօնական խնդրի պատմագիտական հետազօտութիւն»-ից: Սա կկարողանար իրականացնել բացառապես աստվածաբանական կրթություն ստացած հոգևորականը, որը եկեղեցու սպասավոր լինելով հանդերձ, վեր կանգնելով հավատքի առանձնահատկություններից, կլիներ անաչառ և կխոսեր գիտության տեսանկյունից[36]:

Կ. եպս. Տեր-Մկրտչյանը լավ հոգևորական լինելու համար բավարար չէր համարում հասարակության հոգևոր կարիքները տեսնելու կարողությունը: Ըստ նրա՝ դրա համար անհրաժեշտ էր որոշակի կրթական մակարդակ, որը կօգներ ավելի վարժ կիրառել արդեն իսկ ունեցած ունակությունները: Կ. եպս. Տեր-Մկրտչյանը ճշմարիտ եկեղեցական դառնալու միակ և լուսավոր ճանապարհը համարում է աստվածաբանություն սովորելը՝ տվյալ պարագայում կարևորելով մասնագիտական կրթությունը ոլորտում առաջընթացի համար: Այստեղից էլ հետևություն. եկեղեցականին աստվածաբանական կրթություն ստանալու և մասնագիտական աշխատանքում էլ ավելի կատարելագործվելու հնարավորություն տալով՝ կարելի էր շատ սպասելիքներ և պահանջներ ունենալ հոգևորականից: Միայն կրթված հոգևորականներով հարուստ լինելու պարագայում է, որ մեր եկեղեցին կարող էր նոր ծաղկման շրջան ապրել և «արդարացնել հասարակության սպասելիքները»[37]:

Սակայն Կ. եպս. Տեր-Մկրտչյանը կարևորում էր լավագույն կրթությունից հետո անպայմանորեն փորձի ձեռք բերումը: Կարևորելով աստվածաբանական կրթություն ստանալը՝ վերջինս շեշտադրում է, որ «... աստուածաբանը եկեղեցականի վերարկու հագնելով՝ անմիջապէս թեմական կառավարիչ չի լինի: Վարչական բարձր պաշտօններ վարելու համար տասնեակ տարիների փորձառութիւն պէտք է, որ ձեռք է բերուում գործնական կեանքի մէջ»[38]: Վերջինիս շեշտադրմամբ՝ լավագույն արդյունքը կարելի է ստանալ միայն կրթությունից հետո անհրաժեշտ փորձառություն անցնելով[39]:

Կ. եպս. Տեր-Մկրտչյանն իր հոդվածում ոչ միայն բնական երևույթ է համարում քննադատության առկայությունն այս հարցում, այլև դա համարում աստվածաբանություն գիտության և առհասարակ հայ հոգևոր կրթական համակարգի լավարկման լավագույն միջոցներից մեկը: Սակայն այս ամենը հաշվի առնելով հանդերձ՝ վերջինս շեշտադրում է, որ քննադատությունն էլ պետք է լինի տեղին և իմաստալից. «Բայց մի բերան պախարակել բոլոր աստուածաբաններին, առանց ամենաթեթև

[36] Նույն տեղում, էջ 202:
[37] Նույն տեղում, էջ 203-204:
[38] Նույն տեղում, էջ 204:
[39] Նույն տեղում:

գաղափար ունենալու աստուածաբանութեան մասին. այն նախապաշարումը տարածել հասարակութեան մէջ, թէ ով կուզէ լինի՝ բաւական է որ անմտութիւն է ունեցել տարիներով տքնելու եւ աստուածաբանութիւն սովորելու, այդ արդէն ապացոյց է, որ նա անպէտք հոգեւորական է–... Նորան (Հայ եկեղեցուն– Ա. Ա.) ինտէլիգէնտնէր պէտք չեն, այլ հոգեւորական կոչման համար, այդ կոչման համապատասխան աստուածաբանական գիտութիւններ ուսանելով՝ պատրաստուած մարդիկ»[40]: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ 19–րդ դարավերջին Հայ եկեղեցին ուներ հայ հասարակությանը լսելու, հասարակության և ժամանակաշրջանի արդիականացման պահանջներին ականջալուր լինելու խնդիր, ինչը Մայր Աթոռի միաբանության եզակի ներկայացուցիչները տեսնում էին և փորձում էին կառուցել երկխոսության անհրաժեշտ կամուրջը:

Հայ հոգևոր դասի ներկայացուցիչների երկխոսությունը «Մշակ»–ում հոգևորականների աստվածաբանական կրթություն ստանալու վերաբերյալ

Այս համատեքստում հետաքրքրական են Հայ եկեղեցու ներսում հոգևոր դասի տարբեր ներկայացուցիչների դիրքորոշումները խնդրո առարկա հարցի, ինչպես նաև Կ. եպս. Տեր–Մկրտչյանի հոդվածների վերաբերյալ: «Մշակ»–ի 1898թ. 126–րդ համարում Մեսրոպ քահանա Մելյանը «Էջմիածնի անդրանիկ աստուածաբանը» (Նամակ խմբագրութեան) վերտառությամբ հոդվածով անդրադարձ է անում Կ. եպս. Տեր–Մկրտչյանի «Աստուածաբաններ պէ՞տք են» հոդվածում առաջ քաշված դիրքորոշումներին և հակադարձում դրանց: Հակիրճ ներկայացնելով Կ. եպս. Տեր–Մկրտչյանի տեսակետները՝ Մեսրոպ քահանա Մելյանը նախ անդրադառնում է հասարակության շրջանում հայ հոգևոր դասի նկատմամբ ձևավորված ոչ բարյացակամ վերաբերմունքին և դրա պատճառը տեսնում է հետևյալ մտքի մեջ. «Մեր կարծիքով հայոց հասարակութիւնը հէնց այն օրից սկսեց խէթ աչքով նայել իր հոգևորականի վրա, երբ հոգևորականը իր շահերը սկսեց բաժանել հասարակութեան շահերից, երբ օրինականութիւնը, ձևականութիւնը, դպրութիւնը իրան միջոց դնելով սկսեց հասարակութեան գործնական ասպարէզից փախուստ տալ, երբ խօսքի ու ծէսի պաշտօնեայ դարձաւ...»[41]: Անդրադառնալով պատրաստված հոգևորականների անպայմանորեն աստվածաբանություն ուսանելու Կ. Տեր–Մկրտչյանի պնդմանը՝ Մեսրոպ

[40] Նույն տեղում, էջ 204:

[41] Էջմիածնի անդրանիկ աստուածաբանը (Նամակ խմբագրութեան), *Մշակ*, 1898, հ. 126, շաբաթ, յուլիսի 18, էջ 2:

քահանա Մելյանը առաջ է բերում այն միտքը, որ մեր հոգևորականները Եվրոպայում ուսանելով՝ ստանում են կաթոլիկ եկեղեցու ոգուն հարիր կրթություն: Իսկ այդ կրթությամբ և արժեհամակարգով հայ հոգևորականներ պատրաստելը՝ եկեղեցու և ոչ հայ հասարակության ոգուն համապատասխան, կնշանակեր ընդհանրապես չճանաչել Հայ եկեղեցու ոգին և հայ հասարակության տրամադրությունն առհասարակ: Մեսրոպ քահանա Մելյանը նշում է, որ Հայ եկեղեցին երբևէ զատված չէ եղել հայ հասարակությունից: Այնուհետ հեղինակը միտքը ավարտում է հետևյալ բնորոշմամբ. «Այն ինչ սիրելի էր սպասել, որ կրօնական դասագրքերի քննադատ, աստուածաբանական գիտութիւնների համախմբումների ծրագիր կազմող, համեմատական դաւանաբանութեան վարդապետ ներկայացող աստուածաբանի հայեացքների, ուղղութեան, ձգտումների հիմքը մեր ազգային եկեղեցու հոգու հարազատութիւնը լինէր աւելի, քան թէ մանր մունր վարդապետութիւնների մեկնութիւնները»[42]: սԱնդրադառնալով հայ հոգևորականի եկեղեցուն և ոչ հասարակությանը ծառայելու կարծիքին՝ Մեսրոպ քահանա Մելյանը հայտնում է այն տեսակետը, որ վերոհիշյալը տարածված ամենավտանգավոր կարծիքներից է և որ «Հոգևորականը եկեղեցում պաշտածը և քարոզածը պէտք է կեանքի մէջ, հասարակութեան մէջ կենդանի գործերով կենդանացնի: Այլապէս, նա անարժան հայ հոգևորական է. այլապէս նա մեռել թաղող մի մեռել է և իր անձը պարարող մի օրինական, մի փարիսեցի, մի դպիր»[43]:

Այս համատեքստում ուշադրության է արժանի Կ. եպս. Տեր-Մկրտչյանի նամակը «Մշակ»-ին, որտեղ անդրադառնում է իր «Աստուածաբաններ պէ՞տք են» հոդվածի վերաբերյալ մամուլում արված հակադարձումներին՝ առավելապես խոսելով աստվածաբանների, աստվածաբանական կրթության մասին: Կ. եպս. Տեր-Մկրտչյանն իր նամակում առաջարկում է սկզբունքի խնդիրը չշփոթել անձնականի հետ: Ունենալով ինչ-ինչ խնդիրներ անձի հետ[44]՝ դա չտարածել ողջ դասի և նրա մնացյալ ներկայացուցիչների վրա, որովհետև դրանով ստեղծվում էր թյուր կարծիք հասարակության լայն շրջաններում, որն էլ խոչընդոտում էր հոգևոր դաս-հասարակություն փոխադարձ ըմբռնմանը: Նա նաև առաջ է քաշում այն միտքը, որ հասարակության շրջանում ինչ-ինչ շրջանակների հետևողական աշխատանքի շնորհիվ ձևավորվել էր բացասական և միաժամանակ շատ թյուր կարծիք հոգևորականության և հատկապես աստվածաբանների վերա-

[42] Էջմիածնի անդրանիկ աստուածաբանը (Նամակ խմբագրութեան), *Մշակ*, 1898, հ. 126, շաբաթ, յուլիսի 18, էջ 2:
[43] Նույն տեղում:
[44] **Կարապետ վարդապետ**, Նամակ խմբագրութեան, *Մշակ*, 1898, հ. 134, հինգշաբթի, յուլիսի 30, էջ 3:

բերյալ, որը մշտապես բորբոքվում էր մամուլում տպագրվող ուռճացված և միակողմանիորեն մեկնաբանված տեղեկություններով[45]: Իսկ աստվածաբանների վերաբերյալ արված «ոչ պիտանի» բնորոշումը Կ. եպս. Տեր-Մկրտչյանը բացատրում էր մինչև Էջմիածին վերադարձը աստվածաբանություն ուսանող հայ հոգևորականների հանդեպ եղած կանխակալ վերաբերմունքի առկայությամբ[46]: Պարզ է դառնում, որ Հայ եկեղեցին, որպես կենդանի օրգանիզմ, իր ներսում ուներ անհամաձայնություն: Աստվածաբան միաբանները ոչ միանշանակ էին ընկալվում հայ հոգևոր դասի ներկայացուցիչների կողմից, իսկ մամուլում Հայ եկեղեցու երկու հոգևորականների նման երկխոսությունը մի կողմից դրական նշանակություն ունի. ապացույցն է այն բանի, որ Մայր Աթոռը փակ համակարգ չէր և անգամ հոգևոր դասի ներսում առկա անհամաձայնությունները քննարկվում էին մամուլում՝ դառնալով հասանելի հասարակության բոլոր շերտերին: Մյուս կողմից այս դիպվածը խոսում է Հայ եկեղեցում եկեղեցաշինության ու եկեղեցական քաղաքականության փնտրտուքի, ժամանակի պահանջներին համապատասխանելու անհրաժեշտության հասկանալու մասին:

Կ. եպս. Տեր-Մկրտչյանի դիտարկումները Հայ եկեղեցում կուսակրոն հոգևորականների դերի, անհրաժեշտության և «Քահանայական հարց»-ի վերաբերյալ

Այսպես «Արարատ»-ի 1898 թ. հունիսի համարում տպագրվում է «Կրօնաւորներ պէ՞տք են» հոդվածը, որն անստորագիր է, բայց, բովանդակությամբ երկրորդելով 1898թ. մայիսի համարում տպագրված Կարապետ Վարդապետի «Աստուածաբաններ պէ՞տք են» հոդվածին, մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ այն ևս պատկանում է Կ. եպս. Տեր-Մկրտչյանի գրչին: Այս հոդվածում արդեն անդրադարձ է կատարվում կուսակրոն հոգևորականների (վարդապետ, աբեղա) հարցին:

Հոդվածում Կ. եպս. Տեր-Մկրտչյանը հերքում է տարածված այն տեսակետը, որ հոգևորականության կարիքը զգացվում է միայն մեզ նման հասարակություններում և ոչ օրինակ քաղաքակիրթ եվրոպական հանրույթներում: Վերջինս բերում է Գերմանիայի օրինակը, որտեղ աստվածաբանության ուսանողների մեծ մասը համալսարանական ավարտական քննությունը ստանալուց հետո դիմում է և սպասում, թե իրեն որտեղ պետք է նշանակեն հոգևոր սպասավորության համար: Որակյալ կրթություն ստացած երիտասարդները, ունենալով հնարավորություն կյանքի այլ ոլորտներում կայանալու և աշխատանք ծավալելու, գնում են

[45] Նույն տեղում:
[46] Նույն տեղում:

հոգևոր ոլորտ և սպասավորում՝ իրենց ստացած գիտելիքը ծառայեցնելով հասարակության շահերին[47]: Կ. եպս. Տեր-Մկրտչյանն, իհարկե, նշում է, որ Եվրոպայում ևս դիտվում է չամուսնացած հոգևորականների թվի նվազում[48] և մատնանշում, որ եթե կաթոլիկ եկեղեցին չամուսնացած հոգևորականներ պատրաստել և պատրաստում է հստակ նպատակով՝ որպես սեփական շահերի համար կռվող բանակ, ապա նույնը չի կարելի ասել Հայ եկեղեցու համար: Մեզանում չի հետապնդվել նման նպատակ, այլ կուսակրոն հոգևորականների պատրաստությունը մըշտապես ենթադրել է սպասավորներ Հայ եկեղեցու և հավատացյալների համար: Ստացվում է այստեղ հիմնական խնդիրը հետևյալն է, թե ներկա ժամանակաշրջանում վանականները որքանո՞վ են հավատարիմ իրենց կոչմանը, քանի որ այդ կոչման օգտակարության և անհրաժեշտության հարցը քննարկումից դուրս է[49]: Հետաքրքրական է, որ Կ. եպս. Տեր-Մկրտչյանն իր հոդվածներում չէր անում վերջնական, դոգմատիկ եզրահանգումներ, այլ փորձում էր իր ասելիքը տեղ հասցնել հարցադրումների և հասարակությանը ևս առողջ երկխոսության դաշտ բերելու ճանապարհով:

Արդեն «Արարատ»-ի 1898 թ. օգոստոսյան համարում տպագրված «Կրկին քահանայական հարցը և աստուածաբանութիւնը» հոդվածում անդրադառնալով հոգևորականության եկեղեցուն և ոչ հասարակությանը ծառայելու մտքին՝ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը մանրակրկիտ քննության առնելով հասարակություն և եկեղեցի եզրույթները, դրանց իրական բացատրություններն ու գոյության իմաստը, հոգևորականության դերակատությունն այս երկուսում՝ նշում է, որ հոգևորականը կոչված է ծառայելու Քրիստոսին և ոչ մարդկային հասարակությանը: Հոգևորականի դերակատարումն է ծառայել «...այն Քրիստոսին, որ եկեղեցւոյ անտեսանելի գլուխն է Նորա գծած շաւղով ընթանալ, Նորա հոգւով, Նորա գաղափարներով մարդիկ կրթել եւ ի կէտ կոչմանն ուղղել...: Հարկաւ նա (հոգևորականը- Ա.Ա.), իբրեւ նիւթական կարիքների տէր մարդ՝ միեւնոյն ժամանակ հասարակութեան անդամ է եւ պարտաւոր է իւր ձեռքից եկած ծառայութիւնն այդտեղ եւս չխնայել. բայց նա գործում է այդ դեպքում իբրեւ սոսկ քաղաքացի եւ ո՛չ իբրեւ եկեղեցական»[50]: Անդրադարձ կատարելով ընդհանրապես հայ հոգևորականության շրջանում առկա կղերական տարբեր ձգտումներին՝ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը, չհերքելով դրա առկայությունը Հայ եկեղեցում, նշում է, որ մեզանում եկեղեցի և կղեր բառերը նույնացվում են: Սա համա-

[47] Կրօնավորներ պէ՞տք են..., էջ 256:
[48] Նույն տեղում, էջ 257:
[49] Նույն տեղում:
[50] **Կարապետ Վարդապետ**, Կրկին քահանայական հարցը և Աստուածաբանութիւնը, *Արարատ*, 1898, օգոստոս, էջ 346:

րելով սխալ մտայնություն՝ նա առաջ է քաշում այն միտքը, որ կղերականությունը չի ստեղծվել եկեղեցու կողմից, այլ այդ երևույթը ծնունդն է եկեղեցուն ամեն կերպ տիրել կամեցող աշխարհի և աշխարհիկ կարգերի[51]: Խոսելով հոգևոր դասի մասնագիտական կրթություն ստանալու և եկեղեցուն ծառայելու միջև առկա օրգանական և ճշմարիտ կապի մասին՝ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը հոգևորականների կրթության և իրենց ծառայությունը եկեղեցուն մատուցելու մեջ չի տեսնում կղերական հետքեր, այլ համարում է, որ կրթված հոգևորականների կողմից հոգևոր ճշգրիտ ծառայությունն ինքնին դեմ է կղերականությանը[52]: Ամփոփելով իր միտքը վերոշարադրյալի մասին՝ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը փորձում է իր, ինչպես նաև «Արարատ»-ի խմբագրության տեսակետն այս առնչությամբ ընդհանրացնել հետևյալ մտքում. «... ով եկեղեցական կոչումն է յանձն առնում, առանց իւր կեանքի իսկական նպատակը դնելու եկեղեցուն ծառայել՝ նա մեղանչում է Աստուծոյ եւ մարդոց առաջ, եւ բարձրանում է այնպիսի ծառի վերայ, որը տակից կտրել է կամենում: Եկեղեցին կղերը չէ եւ եկեղեցուն ծառայել չի նշանակում իրեն կամ որեւէ դասակարգի շահերին, այլ Քրիստոսին եւ Քրիստոսի ժողովրդին ծառայել ... Եկեղեցին իւր պաշտօնեաների հետ հաշիւների մէջ չէ մտնում, պայմաններ չէ դնում եւ ոչ մի անձնական բարիք չէ խոստանում. այլ կատարեալ անձնազոհութիւն է պահանջում...: Եկեղեցին չի պահանջում, որ իւր պաշտօնեաների վերայ իբրեւ մի առանձնաշնորհեալ եւ բոլոր միւս մարդկանցից գերազանց դասակարգի վերայ նայեն»[53]: Իսկ այս ծառայությունը լավագույնս իրականացնելու համար Կ. եպս. Տեր-Մկրտչյանը վերստին առաջ է բերում հոգևորականի կրթության ու որոշակի հմտությունների տիրապետելու հանգամանքը: Կրթությունն ու հմտությունները վերջիններիս, ըստ Տեր-Մկրտչյանի, փորձում է տալ համալսարաններում գործող աստվածաբանության բաժինը: Վերջինիս կարևորությունը ևս մեկ անգամ շեշտադրելով հոգևորականների պատրաստության գործում՝ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը այն չի համարում միակ և անբեկանելի ճանապարհը[54]:

Ի հավելումն վերևում ասվածի՝ նշենք, որ «Արարատ»-ի 1899 թ. փետրվարի համարում տպագրվել է անստորագիր «Կրթուած քահանաները և ժողովուրդը» հոդվածը, որի լեզուն, գրության ոճն ու օգտագործված բառամթերքը, հոդվածում արծարծված գաղափարները նման են Կ. եպս. Տեր-Մկրտչյանի հոդվածների բնույթին: Ենթադրում

[51] Նույն տեղում, էջ 347:
[52] Նույն տեղում, էջ 348:
[53] Նույն տեղում, էջ 348-349:
[54] Նույն տեղում, էջ 349:

ենք, որ այն ևս պատկանում է Կ. եպս. Տեր-Մկրտչյանի գրչին: Այստեղ գտնում ենք մտքեր, որոնք նախկինում քննարկվել են Կ. եպս. Տեր-Մկրտչյանի հոդվածներում: Հակիրճ փորձել ենք անդրադառնալ նաև այս հոդվածին, քանի որ, ըստ էության, այստեղ ևս գտնում ենք կարևոր մտքեր: Հետաքրքրական է, որ, հոգևորականների կրթությունը կարևորելով հանդերձ՝ «Արարատ»-ի խմբագրությունը, վերջիններիս թվում և Կ. եպս. Տեր-Մկրտչյանը, որը վերոհիշյալ ժամանակահատվածում «Արարատ»-ի խմբագիրն էր, ճշմարիտ հոգևորականի համար կարևոր է համարում նաև փորձառությունն ու հոգևոր հովիվ եկեղեցականին առաջադրվող տարբեր որակների առկայությունը՝ առանց որոնց վերջինս չի կարողանա իր պարտականությունների ողջ ծավալն իրականացնել: Ընդունելով հոգևորականների «ընկած վարկի» և հասարակության շրջանում դեպի հոգևորականությունը տիրող անվստահության մեջ Հոգևոր իշխանության բացթողման գործոնը՝ միաժամանակ նշվում է, որ հոգևորականը, որը կոչվում է ծառայության որևէ բնակավայրում իր անդուլ աշխատանքի և իր կոչմանն արժանի լինելով, ճշմարիտ ծառայության շնորհիվ միայն կկարողանա բարի և զորեղ անուն վաստակել, իսկ Հոգևոր իշխանության կողմից հասարակության նկատմամբ պարտադրանքի կիրառումը կունենա հակառակ արդյունք[55]:

Եզրակացություն

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ հոգևոր կրթության, հայ հոգևորականների եվրոպական համալսարաններում աստվածաբանական կրթություն ստանալու վերաբերյալ 19-րդ դարավերջին ծավալված թեժ քննարկումները հայ կրթական, գիտական, հասարակական դաշտում Հայ եկեղեցու դերակատարման վերստին վերիմաստավորման հրամայականի ցուցիչներ էին: Հանուն արդարության, պետք է շեշտադրել, որ հայ հոգևորականությունն այս խնդրին ամբողջապես անհաղորդ չէր, հոգևոր դասի շարքերում կային անհատներ, որոնք փորձում էին իրենց գործունեությամբ նպաստել խնդրի լավագույնս լուծմանը: Հոգևորականների շրջանում այդ անհատներից մեկն էլ Կ. եպս. Տեր-Մկրտչյանն էր, որը խնդրո առարկա ուսումնասիրության մեջ ոչ միայն խոսքով, այլև գործնականում էր փորձում նպաստել կրթական գործի բարելավմանը: Ասվածի ապացույցն են Կ. եպս. Տեր-Մկրտչյանի անձնական արխիվում պահվող տարբեր նամակներ,

[55] Կրթուած քահանաները և ժողովուրդը, *Արարատ*, 1899, փետրուար, էջ 64-67:

որոնց բովանդակության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջինս փորձել է ամեն կերպ, տարբեր լծակներ և կապեր օգտագործելով գումար հայթայթել հայ երիտասարդների Եվրոպայում հոգևոր կրթություն ստանալու, տարբեր քաղաքներում և գյուղերում (Թավրիզ, Շամախի, Ցղնա ևն) դպրոցների հիմնադրման, պահպանման և լավարկման ծախսերը հոգալու, ինչպես նաև կրթություն ստացած, բանիմաց մասնագետներով հայ դպրոցը համալրելու ուղղությամբ[56]:

[56] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 312, ց. 1, գ. 99, թ. 1: Տե՛ս նաև նույն տեղում, թ. 33: Տե՛ս նաև նույն տեղում, ֆ. 56, ց. 15, գ. 359ա, թ. 22: Տե՛ս նաև Մատենադարան, Կարապետ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 100, վավ. 18, 49, 100, 104, 105, 124, 186: Տե՛ս նաև նույն տեղում, Գարեգին Հովսեփյանի անձնական արխիվ, թղթ. 95, վավ. 477, թ. 1ա: Տե՛ս նաև Նամակ Պարսկաստանից, *Մշակ*, 1907, h. 170, ուրբաթ, նոյեմբերի 30, էջ 2: Տե՛ս նաև Նամակ Պարսկաստանից, *Մշակ*, 1908, h. 56, չորեքշաբթի, մարտի 12, էջ 3: Տե՛ս նաև Կենտրոնական դպրոց Ատրպատականում, *Մշակ*, 1908, h. 82, ուրբաթ, ապրիլի 18, էջ 4: Տե՛ս նաև Նամակներ Պարսկաստանից, *Մշակ*, 1908, h. 87, հինգշաբթի, ապրիլի 24, էջ 4: Տե՛ս նաև Թեմական դպրանոց Թաւրիզում, *Մշակ*, 1909, № 18, երեքշաբթի, յունվարի 27, էջ 4: Տե՛ս նաև Թեմական դպրանոց Թաւրիզում, *Մշակ*, 1909, № 19, չորեքշաբթի, յունվարի 28, էջ 4: Տե՛ս նաև Նամակ Պարսկաստանից, *Մշակ*, 1909, № 52, չորեքշաբթի, մարտի 10, էջ 4: Տե՛ս նաև Կրթական գործը Սալմաստում, *Մշակ*, 1910, № 185, երեքշաբթի, օգոստոսի 24, էջ 4: Տե՛ս նաև Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի գործունեության չուսումնասիրված էջերը, «Արցախ մշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողով, Երևան և Վայոց Ձոր, 15-18,07.2022թ., Die unerforschten Seiten aus der Tätigkeit des Bishofs Karapet Ter-Mkrtchyan/ Կարապետ եպս. Տեր- Մկրտչյանի գործունեության չուսումնասիրված էջերը, «Das kulturelle Erbe von Arzach/ Արցախի մշակութային ժառանգությունը», 2024 Üniversitätsverlag Kiel, Deutschland, https://macau.uni-kiel.de/receive/macau_mods_00004097: (մուտք՝ 10.02.2026):

ARMENIAN ECCLESIASTICAL EDUCATION AT THE END OF THE 19TH CENTURY AND BISHOP KARAPET TER-MKRTCHYAN

ANAHIT ASATRYAN
Theologian
Office of the High Commissioner
for Diaspora Affairs of RA

Abstract

The article explores the debates within Armenian society at the end of the 19th century concerning the education of the Armenian clergy, as reflected in the Armenian periodical press of the time. It particularly elucidates the perspectives of Bishop Karapet Ter-Mkrtchyan, the first theologian-monk of the Armenian Church, on this issue through an analysis of his scholarly works and the materials preserved in his personal archive. Furthermore, based on a study of issues from the relevant period of two major Armenian periodicals (the Mshak and Hayrenik), the article outlines their respective positions on clerical education within the Armenian Church and on contemporary Armenian ecclesiastical educational institutions. The selection of these periodicals is conditioned by their significant role in shaping public opinion during the period under discussion.

Keywords: Karapet Bishop Ter-Mkrtchyan; theologian; clerical education; the Priestly Question; monastic; clergy; sermon; Ararat journal; Mshak; Hayrenik; Armash Theological Seminary

АРМЯНСКОЕ ЦЕРКОВНОЕ ОБРАЗОВАНИЕ КОНЦА XIX ВЕКА И КАРАПЕТ ЕПИСКОП ТЕР-МКРТЫЧЯН

АНАИТ АСАТРЯН
богослов
Офис Главного уполномоченного
по делам диаспоры РА

Аннотация

Статья посвящена обсуждениям, развернувшимся в армянском обществе в конце XIX века вокруг вопросов образования армянского духовенства, отраженных в армянской периодической печати того времени, а также выявлению подходов к данной проблеме первого богослова-монаха Армянской Церкви епископа Карапета Тер-Мкртычяна. На основе анализа его научных трудов и материалов, хранящихся в личном архиве, в статье реконструируются взгляды епископа Карапета Тер-Мкртычяна на проблему духовного образования с позиции богослова и учёного. Кроме того, в результате изучения выпусков рассматриваемого периода двух ведущих армянских периодических изданий («Мшак» и «Айреник») представлены их позиции по вопросам образования духовенства Армянской Церкви и деятельности армянских духовно-учебных заведений конца XIX века. Выбор указанных периодических изданий обусловлен их значительной ролью в формировании общественного мнения в рассматриваемый период.

Ключевые слова: епископ Карапет Тер-Мкртычян, богослов, образование духовенства, «священнический вопрос», монашество, духовенство, проповедь, журнал «Арарат», «Мшак», «Айреник», Армашская духовная семинария

Արխիվներ և ֆոնդեր

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 312, ց. 1, գ. 99, թթ. 1, 33; ֆ. 56, ց. 15, գ. 359ա, թ. 22:
2. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Կարապետ Տեր-Մկրտչյանի անձնական արխիվ, թղթ. 100, վավ. 18, 49, 100, 104, 105, 124, 186:
3. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Գարեգին Հովսեփյանի անձնական արխիվ, թղթ. 95, վավ. 477, թ. 1ա:

Գրականության ցանկ

1. **Ասատրյան Ա.**, «Կարապետ Տեր-Մկրտչյանը որպես Հայ Եկեղեցու բարենորոգիչ», *Հայոց պատմության հարցեր*, 19, Երևան, 2018, էջ 54–56:
2. **Ասատրյան Ա.,** Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի գործունեության չուսումնասիրված էջերը, *«Արցախի մշակութային ժառանգությունը»* միջազգային գիտաժողով, Երևան–Վայոց Ձոր, 15–18 հուլիսի 2022, նաև. Die unerforschten Seiten aus der Tätigkeit des Bishofs Karapet Ter-Mkrtchyan, *«Das kulturelle Erbe von Artsakh»,* Universitätsverlag Kiel, Deutschland, 2024:
3. **Գրիգորյան Ա.**, *Միսաք Խոսրիկյանը և նրա «David der Philosoph» ավարտաճառը*, Երևան, 2020:
4. **Կարապետ Աբեղայ**, Քարոզի նշանակութիւնը և գործադրութեան եղանակը, *Արարատ*, 1895:
5. **Կարապետ Վարդապետ**, Արմաշու դպրեվանքը, *Արարատ*, 1895, օգոստոս:
6. **Կարապետ Վարդապետ**, Աստվածաբաններ պէտք են, *Արարատ*, 1898, մայիս:
7. **Կարապետ Վարդապետ**, Կրթուած քահանաները և ժողովուրդը, *Արարատ*, 1899, փետրվար:
8. **Կարապետ Վարդապետ**, Կրկին քահանայական հարցը և աստվածաբանութիւնը, *Արարատ*, 1898, օգոստոս:
9. **Կարապետ Վարդապետ**, Կրօնավորներ պէտք են, *Արարատ*, 1898, հունիս:
10. **Կարապետ Վարդապետ**, Հայ հոգևորականութեան մէջ կղերական ոգի որոնողները, *Արարատ*, 1895, հուլիս:

11. **Կարապետ Վարդապետ**, Հոգևորական ասպարէզը, *Արարատ*, 1895, մարտ:
12. ***«Հայրենիք»,*** Կ. Պոլիս, 5 հոկտեմբերի 1892, հ. 262; 11 մարտի, 8 մայիսի, 13, 14, 22 հունիսի, 2, 5, 9, 13, 21 հուլիսի, 12 սեպտեմբերի 1895, հ. 1108, 1163, 1188, 1189, 1197, 1207, 1210, 1214, 1218, 1226, 1279:
13. ***«Մշակ»,*** Թիֆլիս, 18, 30 հուլիսի 1898, հ. 126,134; 30 նոյեմբերի 1907, հ. 170; 12 մարտի, 18, 24 ապրիլի 1908, հ. 56, 82, 87; 27, 28 հունվարի, 10 մարտի 1909; 24 օգոստոսի 1910, հ. 18, 19, 52, 185:
14. **Սահակյան Ն.**, *Եկեղեցու կարգն ու ժողովրդի բարքը. Կարապետ Տեր-Մկրտչյան և Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան)*, Երևան, 2021 chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://modernities.am/wp-content/uploads/2022/05/%D5%86%D5%A1%D6%80%D5%A5-%D5%8D%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6.pdf (մուտք՝ 10.02.2026)
15. *Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան*, Գիրք Է. Խրիմեան Հայրիկը և ցարական բռնապետութիւնը (1903–1907), Երևան, 2000:

Ընդունվել է՝ 01.02.2026
Գրախոսվել է՝ 08.02.2026
Հանձնվել է տպ.՝ 26.06.2026